ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«21» օգոստոսի 2026 թ. N100-Լ

ՀՐԱՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հուլիսի 9-ի N 1029-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական սոցիալական բնակարանային ֆոնդի բնակիչների հետ անհատույց հիմքով կացարանի տրամադրման և սոցիալական ծառայությունների մատուցման մասին և պետական սոցիալական բնակարանային ֆոնդի բնակիչների հետ մատչելի վարձավճարի հիմքով կացարանի տրամադրման և սոցիալական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360
2026-08-21 15:18 GMT+4
Հավաստագրումն ստացվել է կենտրոնից

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2026 թվականի օգոստոսի 21-ի N 100-Ն հրամանի

Ձև 1
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ——
ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԻՄՔՈՎ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կնքման վայրը օր,ամիս, տարեթիվ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն ----------, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղաքացի ----------ը (այսուհետ՝ Բնակիչ), մյուս կողմից, հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության ——— տարածքային կենտրոնի ——————— որոշումը կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ——————— հրամանը (եթե արտահերթ է) (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2026 թվականի հուլիսի 9-ի N 1029-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կազմակերպությունը Պայմանագրով սահմանված պայմաններով անհատույց հիմքով Բնակչին է տրամադրում՝ ——————— հասցեում գտնվող անշարժ գույքի (այսուհետ՝ Սոցիալական տուն) թիվ ——— կացարանը (այսուհետ՝ Կացարան) ---------- ժամկետով՝ որպես ---------- ընտանիք (ընտանիքի կարգավիճակը), իսկ Բնակիչը պարտավորվում է Կացարանն օգտագործել Պայմանագրով սահմանված կարգով և վերադարձնել Կացարանը Պայմանագրի լուծման դեպքում նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2. Կացարանն ունի ____ մ² ընդհանուր մակերես և բաղկացած է հետևյալ սենյակներից՝ ——————— (ննջասենյակ, խոհանոց և այլն): Կացարանն ունի հետևյալ կոմունալ-կենցաղային հարմարությունները՝———————

3. Բնակչի հետ Կացարանում բնակվելու և Կացարանում գտնվող գույքն օգտագործելու իրավունք են ձեռք բերում նաև Բնակչի՝ Որոշմամբ սահմանված դիմումում նշված ընտանիքի անդամները, որոնց տվյալները նշված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

4. Կացարանը Բնակչին հանձնվում է համապատասխան գույքի հետ միասին, որոնք նշված են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ի՝ հանձնման-ընդունման ակտում:

5. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է Բնակչի անհատական կամ ընտանեկան սոցիալական միջամտության ծրագիրը (Շահառուի սոցիալական միջամտության ծրագիր կարող է չկազմվել, եթե Պայմանագիրը կնքվում է անժամկետ), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

6. Կազմակերպությունը Բնակչին տրամադրում է այլ սոցիալական ծառայություններ՝ Պայմանագրով, սոցիալական միջամտության ծրագրով, Կազմակերպության կանոնադրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կազմակերպությունն իրավունք ունի՝

1) պահանջելու Բնակչից պահպանել Կազմակերպության ընդհանուր համակեցության կանոնները (այսուհետ՝ Կանոններ), ինչպես նաև Պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պահանջները.

2) պահանջելու Բնակչից ժամանակին վճարել Կացարանի կոմունալ ծառայությունների դիմաց վճարները.

3) պահանջելու Բնակչից Կացարանն ու հատկացված այլ գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

4) Բնակչի կամ ընտանիքի անդամների կամ այլ անձանց կողմից Կացարանին կամ հատկացված այլ գույքին վնաս պատճառելու դեպքում Բնակչից պահանջելու կատարել Կացարանի վերանորոգումը կամ Կազմակերպությանը փոխհատուցել Կացարանին կամ հատկացված այլ գույքին պատճառած վնասը.

5) Բնակչից պահանջելու Պայմանագրի լուծման դեպքում Կացարանը վերադարձնել Պայմանագրի 1-ին կետում նշված վիճակում:

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) Բնակչին տրամադրել Կացարան՝ Պայմանագրում նշված կոմունալ հարմարություններով.

2) Կացարանը և Հավելված 2-ում նշված այլ գույքը տրամադրել Բնակչին՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո 7 օրվա ընթացքում.

3) Բնակչին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն իր իրավունքների և պարտականությունների մասին:

4) Բնակչին տրամադրել Կանոնները մինչև Պայմանագրի կնքումը:

9. Բնակիչն իրավունք ունի՝

1) Պայմանագրի գործողության ժամկետում անարգել բնակվելու տրամադրված Կացարանում՝ օգտվելով կացարանի կոմունալ հարմարություններից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ.

2) Կացարանում բնակվելու Հավելված 1-ում նշված ընտանիքի անդամների հետ.

3) Ստանալու Կանոնները, ինչպես նաև տեղեկատվություն իր իրավունքների ու պարտականությունների մասին.

4) բնակության ընթացքում յուրաքանչյուր ամիս առավելագույնը 7 օր հյուրընկալելու այլ անձի: Իր կամ իր ընտանիքի անդամի կամ հյուրընկալվողի առողջական խնդիրներով պայմանավորված անընդմեջ հյուրընկալման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրացուցային օրը.

5) վաղաժամկետ դուրս գալու Կացարանից՝ պահպանելով բնակելի տարածության իրավունքը և վերականգնելու հաշվառման ցուցակում նախկին հերթահամարը, եթե Կացարանում առկա են այնպիսի թերություններ, որոնց մասին նա չգիտեր ու չէր կարող իմանալ կացարանում տեղավորվելիս և որոնք Կացարանի բնականոն օգտագործումը դարձնում են անհնար, կամ Կացարանը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում

.

6) Պայմանագիրը լուծելու նպատակով ներկայացնել առցանց կամ առձեռն եղանակով դիմում Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնին.

10. Բնակիչը պարտավոր է՝

1) Կացարանով ապահովման համապատասխան որոշումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում ներկայանալ Կացարան.

2) Կազմակերպություն ներկայանալուց հետո 7-օրյա ժամկետում հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում՝ կացարանի հասցեով.

3) Կացարանը չհանձնել Պայմանագրի Հավելված 1-ում չներառված որևէ այլ անձի օգտագործմանը.

4) Պայմանագիրը ստորագրելուց հետո 15-օրյա ժամկետում սահմանված կարգով դիմել համապատասխան կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ իր անվամբ բաժանորդային հարաբերություններ ձևակերպելու համար, եթե տվյալ ծառայության բնույթից կամ ծառայություն մատուցողի սահմանած կարգից այլ բան չի բխում.

5) Մինչև Պայմանագրի ստորագրումը ծանոթանալ իրեն տրամադրված Կանոններին և ստորագրությամբ հավաստել ծանոթացման հանգամանքը.

6) պահպանել Կանոնները.

7) ներառվել իր սոցիալական դեպքի վարման գործընթացում և իրականացնել սոցիալական միջամտության ծրագրով նախատեսված գործողությունները.

8) միայնակ անձի կամ ընտանիքի բոլոր անդամների՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող կազմակերպություն ընդունվելու, բնակության համար նախատեսված բնակելի տարածություն սեփականության իրավունքով (ժառանգություն, նվիրատվություն և այլն) ձեռք բերելու, բնակության համար նախատեսված բնակելի տարածություն օգտագործման իրավունքով ձեռք բերելու, ՀՀ կառավարության որոշումներով կամ համայնքի կողմից կամ մարմինների հետ համագործակցող կազմակերպության կողմից իրականացվող կացարանով ապահովման որևէ ծրագրի շահառու հանդիսանալու դեպքում, ինչպես նաև բնակության իրավունքի ժամանակահատվածի յուրաքանչյուր

օրացուցային տարվա ընթացքում կացարանից 183 օրվանից ավելի բացակայելու դեպքում 3 օրվա ընթացքում դրա մասին հայտնել Կազմակերպությանը.

9) Կացարանն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

10) Կացարանում վերակառուցում, վերափոխում, սարքավորումների տեղադրում կամ այլ փոփոխություն իրականացնել միայն Կազմակերպության նախնական գրավոր համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) իր կամ ընտանիքի անդամների կամ հյուրընակալած անձանց գործողությունների հետևանքով Կացարանին վնաս պատճառելու դեպքում իրականացնել Կացարանի ընթացիկ վերանորոգումը կամ փոխհատուցել վերանորոգման ծախսերը: Շենքի, ինժեներական համակարգերի, ընդհանուր օգտագործման տարածքների, ինչպես նաև բնականոն մաշվածությամբ պայմանավորված վերանորոգման հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Կազմակերպության կողմից սահմանված կարգով.

12) օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրել իրեն հանձնված Կացարանի կամ գույքի՝ դիտավորությամբ կամ անզգուշորեն վնասման կամ կորստի դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

13) սահմանված ժամկետներում և կարգով կատարել Կացարանում սպառված կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները, ինչպես նաև Սոցիալական տան ընդհանուր օգտագործման տարածքների պահպանման և սպասարկման համար սահմանված պարտադիր վճարները, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

14) կատարել Կացարանի պահպանման համար անհրաժեշտ ծախսերը.

15) պահպանել մաքրություն Կացարանում և Սոցիալական տան ընդհանուր օգտագործման տարածքներում.

16) Կացարանը և հատկացված գույքն օգտագործել Պայմանագրին համապատասխան.

17) գիշերային ժամերին՝ ժամը 23:00-ից մինչև առավոտյան ժամը 7:00-ը Կացարանում և շենքի տարածքում պահպանել լռություն.

18) մինչև Պայմանգրի լուծումը և Կացարանի հետ հանձնումը՝ Կազմակերպությանը հանձնել կոմունալ վճարումները և Սոցիալական տան ընդհանուր տարածքների օգտագործման պարտադիր վճարները հավաստող փաստաթղթերը.

19) Պայմանագրի լուծմանը հաջորդող օրվանից դուրս գալ կացարանից.

20) Պայմանագրի լուծման դեպքում Կացարանը վերադարձնել Կազմակերպությանը՝ Պայմանագրի 1-ին կետում նշված վիճակում.

21) Պայմանագրի լուծման դեպքում Կազմակերպության տնօրինությանը երկու օրվա ընթացքում հանձնել Կացարանի մուտքի դռան բանալիների մեկ օրինակը, որը ծրարավորվում, կապարակնքվում, ստորագրվում է Բնակչի կողմից և պահվում է չհրկիզվող պահարանում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11. Կացարանով ապահովման սոցիալական ծառայության դադարեցման և Պայմանագրի լուծման հիմքերն են՝

1) Պայմանագրով սահմանված ժամկետը լրանալը.

2) Բնակչի առցանց կամ առձեռն եղանակով հրաժարման դիմում ներկայացնելը.

3) միայնակ անձի կամ ընտանիքի բոլոր անդամների՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող կազմակերպություն ընդունվելը.

4) ընտանիքի անդամներից որևէ մեկի կողմից Կազմակերպությունում թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) կամ արգելված այլ նյութեր տարածելը կամ կազմակերպության տարածքում որևէ անձի առողջությանը կամ կյանքին իրական սպառնալիք ներկայացնելը կամ ծանր վնասելը.

5) ընթացիկ տարվա ընթացքում Կազմակերպության Կանոնները երկու անգամից ավելի խախտելը՝ Կանոններով նախատեսված դեպքերում.

6) բնակության իրավունքի ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում կացարանից 183 օրվանից ավել ժամկետով կացարանից բացակայելը.

7) բնակության համար նախատեսված բնակելի տարածություն սեփականության իրավունքով ձեռք բերելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

8) բնակության համար նախատեսված բնակելի տարածություն օգտագործման իրավունքով ձեռք բերելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

9) միայնակ անձի մահը կամ ընտանիքի բոլոր անդամների մահը.

10) Բնակչի սոցիալական միջամտության ծրագրով նախատեսված գործողությունը երկու անգամ անընդմեջ անհիմն չկատարելը՝ ըստ Կազմակերպության սոցիալական աշխատողի եզրակացության, կամ դեպքի վարման համաձայնագիրը կամ միջամտության ծրագիրը չստորագրելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) Բնակչի կողմից որպես կացարանով ապահովման իրավունք ունեցող հաշվառվելու համար ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելը.

12) ՀՀ կառավարության որոշմամբ կամ համայնքի կողմից կամ մարմինների հետ համագործակցող կազմակերպության կողմից իրականացվող կացարանով ապահովման որևէ ծրագրի շահառու հանդիսանալը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

13) հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի դեպքում՝ երկու անգամ անընդմեջ համապատասխան մարմնից անձի (ընտանիքի) վերադարձն իր բնակության վայր նրանց կյանքին կամ առողջությանը սպառնալիք չներկայացնելու մասին տեղեկատվություն ստանալը.

14) Որոշման N 1 հավելվածի 6-7-րդ և 10-րդ կետերում նշված շահառուի դեպքում՝ վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն վեց ամիս ընտանիքի անապահովության միավորը 0.00 կամ ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից բարձր լինելը, իսկ Որոշման 3-րդ կետի 2-5-րդ ենթակետերում նշված շահառուի դեպքում՝ վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն վեց ամիս ընտանիքի

անապահովության միավորը 0.00 կամ ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից բարձր լինելը.

15) Որոշման N 1 հավելվածի 9-րդ կետում նշված շահառուի դեպքում՝ ապաստարանների կամ աջակցության կենտրոնների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի N 171-Լ հրամանով սահմանված մշտադիտարկման արդյունքներով՝ կացարանի անհրաժեշտության բացակայության հանգամանքը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրի պայմանների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար:

13. Բնակիչը կրում է իրեն հատկացված Կացարանի և գույքի կորստի կամ վնասման ռիսկը, եթե այն ոչնչացել կամ վնասվել է Պայմանագրին կամ Կացարանի (գույքի) նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով կամ այն այլ անձին հանձնելու արդյունքում:

14. Պայմանագրի հետ կապված, սակայն Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

15. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

17. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև ծանուցումները, տեղեկությունները, պահանջները և այլ հաղորդումները (այսուհետ՝ Ծանուցում) կատարվում են գրավոր՝ առձեռն, փոստային առաքմամբ կամ Կողմերի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով, եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով տվյալ հաղորդման համար այլ կարգ նախատեսված չէ:

18. Առձեռն հանձնված Ծանուցումը համարվում է ստացված այն ստացող Կողմին հանձնելու օրը, իսկ փոստային առաքմամբ ուղարկված Ծանուցումը՝ այն ստանալու օրը՝ համապատասխան փաստաթղթով հավաստված լինելու դեպքում:

19. Էլեկտրոնային փոստով ուղարկված Ծանուցումը համարվում է պատշաճ ուղարկված, եթե այն ուղարկվել է Կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, և ուղարկողը չի ստացել հաղորդագրությունը չառաքվելու վերաբերյալ ավտոմատ ծանուցում:

20. Կողմերից յուրաքանչյուրն իր հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի կամ Պայմանագրում նշված այլ կոնտակտային տվյալների փոփոխության մասին պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել մյուս Կողմին: Մինչև այդպիսի տեղեկացումը նախկինում տրամադրված տվյալներով կատարված Ծանուցումը համարվում է պատշաճ կատարված:

21. Եթե Բնակիչը հրաժարվում է առձեռն ստանալ Ծանուցումը կամ ստորագրությամբ հաստատել դրա ստացումը, այդ հանգամանքը կարող է արձանագրվել Կազմակերպության կազմված համապատասխան ակտով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Բնակչի մահվան դեպքում, Որոշմամբ սահմանված դեպքերում, Պայմանագրի Հավելված 1-ում նշված նրա ընտանիքի չափահաս անդամներից մեկի հետ կնքվում է նոր պայմանագիր, որի ժամկետի ավարտը պետք է համապատասխանի Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի հետ:

23. Բնակիչն իրավունք չունի Կացարանը կամ դրա մի մասը տրամադրել Պայմանագրի Հավելված 1-ում չնշված այլ անձի ինքնուրույն բնակության կամ օգտագործման՝ հատուցմամբ կամ անհատույց, այդ թվում՝ վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ:

24. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել՝ Որոշմամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

25. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և գործում է մինչև ---------- -ը, եթե առկա չէ ավելի վաղ լուծելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ հիմք:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

26. Պայմանագիրը կազմվել է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Բնակիչ
ՀՎՀՀ՝ Գրանցման համարը՝ Գործունեության վայրը՝ Էլ. փոստ՝ Հեռ.՝ Տնօրեն՝ ----------	Անուն,ազգանուն,հայրանուն անձնագիր/նույնականացման քարտ՝ ---------, տրված՝ ----------. ում կողմից, ՀԾՀ --------- Կացարանի հասցե՝ ---------- Էլ. փոստ՝ Հեռ.՝ _____

Հավելված 1
20.. թվականի .....-ի .....-ի N ____ պայմանագրի

ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Հ/Հ	Ընտանիքի անդամի անձնական տվյալները (անուն հայրանուն ազգանուն)	Անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան և համարը, ում կողմից է տրված, երբ)	Հանրային ծառայությունների համարանիշ կամ չունենալու մասին տեղեկանքի համար	Բնակչի հետ ազգակցական կապը

1.				
2.				

Հավելված 2
20.. թվականի .....-ի .....-ի N ____ պայմանագրի

ԱԿՏ
ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ստորագրման օր, ամիս, տարեթիվ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս տնօրեն---անուն, ազգանուն և _____ անուն, հայրանուն, ազգանուն (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սերիա և համար, տրման ամսաթիվ, ում կողմից, ՀՇՀ , տրամադրված կացարանի հասցե, բնակարանի համար) (այսուհետ՝ Բնակիչ) կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Կազմակերպությունը սույն ակտի հիման վրա Բնակչին հանձնում է _____ հասցեի _____բնակարան՝_____ մ² նախագծային մակերեսով:

Աղյուսակ N1

Հ/Հ	Տարածքի անվանում	Մակերես	Քանակ	Նշումներ
1.				
2.				

Աղյուսակ N2

Կազմակերպություն սույն ակտի հիման վրա Բնակչին հանձնում է հետևյալ գույքը՝

NN Հ/Հ	Գույքի անվանում	Գույքի մակնիշ	Գույքային համար	Քանակ	Տեխնիկական բնութագիրը	Նշումներ
1.						

2.						

Գույքը հանձնեց՝

Կազմակերպության իրավասու անձ

(ստորագրությունը)

Գույքն ընդունեց՝

(ստորագրությունը)

Ձև 2
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն ——
ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՄԱՏՉԵԼԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՀԻՄՔՈՎ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կնքման վայրը օր,ամիս, տարեթիվ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն ----------, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղաքացի ----------ը (այսուհետ՝ Բնակիչ), մյուս կողմից, հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության ——— տարածքային կենտրոնի ——————— որոշումը կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ——————— հրամանը (եթե արտահերթ է) (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2026 թվականի հուլիսի 9-ի N 1029-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կազմակերպությունը Պայմանագրով սահմանված պայմաններով մատչելի վարձավճարի հիմքով Բնակչին է տրամադրում՝ ——————— հասցեում գտնվող անշարժ գույքի (այսուհետ՝ Սոցիալական տուն) թիվ ——— կացարանը (այսուհետ՝ Կացարան) ---------- ժամկետով՝ որպես ---------- ընտանիք (ընտանիքի կարգավիճակը), իսկ Բնակիչը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով վճարել վարձավճարը, Կացարանն օգտագործել Պայմանագրով սահմանված կարգով և Պայմանագրի լուծման դեպքում Կացարանը վերադարձնել նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2. Կացարանն ունի _____ մ² ընդհանուր մակերես և բաղկացած է հետևյալ սենյակներից՝ ———————— (ննջասենյակ, խոհանոց և այլն): Կացարանն ունի հետևյալ կոմունալ-կենցաղային հարմարությունները՝————————————:

3. Բնակչի հետ Կացարանում բնակվելու և Կացարանում գտնվող գույքն օգտագործելու իրավունք են ձեռք բերում նաև Բնակչի՝ Որոշմամբ սահմանված դիմումում նշված ընտանիքի անդամները, որոնց տվյալները նշված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

4. Կացարանը Բնակչին հանձնվում է համապատասխան գույքի հետ միասին, որոնք նշված են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ի՝ հանձնման-ընդունման ակտում:

5. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է Բնակչի անհատական կամ ընտանեկան սոցիալական միջամտության ծրագիրը (Շահառուի սոցիալական միջամտության ծրագիր կարող է չկազմվել, եթե Պայմանագիրը կնքվում է անժամկետ), որը հանդիսանում է հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

6. Կազմակերպությունը Բնակչին տրամադրում է այլ սոցիալական ծառայություններ՝ Պայմանագրով, սոցիալական միջամտության ծրագրով, Կազմակերպության կանոնադրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կազմակերպությունն իրավունք ունի՝

1)պահանջելու Բնակչից ժամանակին վճարել Պայմանագրով սահմանված վարձավճարը.

2) պահանջելու Բնակչից պահպանել Կազմակերպության ընդհանուր համակեցության կանոնները (այսուհետ՝ Կանոններ), ինչպես նաև Պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պահանջները.

3) պահանջելու Բնակչից ժամանակին վճարել Կացարանի կոմունալ ծառայությունների դիմաց վճարները.

4) պահանջելու Բնակչից Կացարանն ու հատկացված այլ գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

5) Բնակչի կամ ընտանիքի անդամների կամ այլ անձանց կողմից Կացարանին կամ հատկացված այլ գույքին վնաս պատճառելու դեպքում Բնակչից պահանջելու կատարել Կացարանի վերանորոգումը կամ Կազմակերպությանը փոխհատուցել Կացարանին կամ հատկացված այլ գույքին պատճառած վնասը.

6) Բնակչից պահանջելու Պայմանագրի լուծման դեպքում Կացարանը վերադարձնել Պայմանագրի 1-ին կետում նշված վիճակում:

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) Բնակչին տրամադրել Կացարան՝ Պայմանագրում նշված կոմունալ հարմարություններով.

2) Կացարանը և Հավելված 2-ում նշված այլ գույքը տրամադրել Բնակչին՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո 7 օրվա ընթացքում.

3) Բնակչին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն իր իրավունքների և պարտականությունների մասին:

4) Բնակչին տրամադրել Կանոնները մինչև Պայմանագրի կնքումը:

9. Բնակիչն իրավունք ունի՝

1) Պայմանագրի գործողության ժամկետում անարգել բնակվելու տրամադրված Կացարանում՝ օգտվելով կացարանի կոմունալ հարմարություններից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ.

2) Կացարանում բնակվելու Հավելված 1-ում նշված ընտանիքի անդամների հետ.

3) ստանալու տեղեկատվություն իր իրավունքների ու պարտականությունների մասին.

4) բնակության ընթացքում յուրաքանչյուր ամիս առավելագույնը 7 օր հյուրընկալելու այլ անձի: Իր կամ իր ընտանիքի անդամի կամ հյուրընկալվողի առողջական խնդիրներով պայմանավորված անընդմեջ հյուրընկալման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրացուցային օրը.

5) վաղաժամկետ դուրս գալու Կացարանից՝ պահպանելով բնակելի տարածության իրավունքը և վերականգնելու հաշվառման ցուցակում նախկին հերթահամարը, եթե Կացարանում առկա են այնպիսի թերություններ, որոնց մասին նա չգիտեր ու չէր կարող իմանալ կացարանում տեղավորվելիս և որոնք Կացարանի բնականոն օգտագործումը դարձնում են անհնար, կամ Կացարանը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում

.

6) Պայմանագիրը լուծելու նպատակով ներկայացնել առցանց կամ առձեռն եղանակով դիմում Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնին.

10. Բնակիչը պարտավոր է՝

1) Կացարանով ապահովման համապատասխան որոշումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում ներկայանալ Կացարան.

2) Կազմակերպություն ներկայանալուց հետո 7-օրյա ժամկետում հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում՝ կացարանի հասցեով.

3) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել վարձավճարը.

4) Կացարանը չհանձնել Պայմանագրի Հավելված 1-ում չներառված որևէ այլ անձի օգտագործմանը.

5) Պայմանագիրը ստորագրելուց հետո 15-օրյա ժամկետում սահմանված կարգով դիմել համապատասխան կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ իր անվամբ բաժանորդային հարաբերություններ ձևակերպելու համար, եթե տվյալ ծառայության բնույթից կամ ծառայություն մատուցողի սահմանած կարգից այլ բան չի բխում.

6) մինչև Պայմանագրի ստորագրումը ծանոթանալ իրեն տրամադրված Կանոններին և ստորագրությամբ հավաստել ծանոթացման հանգամանքը.

7) պահպանել Կանոնները.

8) ներառվել իր սոցիալական դեպքի վարման գործընթացում և իրականացնել սոցիալական միջամտության ծրագրով նախատեսված գործողությունները.

9) միայնակ անձի կամ ընտանիքի բոլոր անդամների՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող կազմակերպություն ընդունվելու, բնակության համար նախատեսված բնակելի տարածություն սեփականության իրավունքով (ժառանգություն, նվիրատվություն և այլն) ձեռք բերելու, բնակության համար նախատեսված բնակելի տարածություն օգտագործման իրավունքով ձեռք բերելու, ՀՀ կառավարության որոշումներով կամ համայնքի կողմից կամ մարմինների հետ համագործակցող կազմակերպության կողմից իրականացվող կացարանով ապահովման որևէ ծրագրի շահառու հանդիսանալու դեպքում, ինչպես նաև բնակության իրավունքի ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում կացարանից 183 օրվանից ավելի բացակայելու դեպքում 3 օրվա ընթացքում դրա մասին հայտնել Կազմակերպությանը.

10) Կացարանն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

11) Կացարանում վերակառուցում, վերափոխում, սարքավորումների տեղադրում կամ այլ փոփոխություն իրականացնել միայն Կազմակերպության նախնական գրավոր համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ դեպքերի.

12) իր կամ ընտանիքի անդամների կամ հյուրընակալած անձանց գործողությունների հետևանքով Կացարանին վնաս պատճառելու դեպքում իրականացնել Կացարանի ընթացիկ վերանորոգումը կամ փոխհատուցել վերանորոգման ծախսերը: Շենքի, ինժեներական համակարգերի, ընդհանուր օգտագործման տարածքների, ինչպես նաև բնականոն մաշվածությամբ պայմանավորված վերանորոգման հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Կազմակերպության կողմից սահմանված կարգով.

13) օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրել իրեն հանձնված Կացարանի կամ գույքի՝ դիտավորությամբ կամ անզգուշորեն վնասման կամ կորստի դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

14) սահմանված ժամկետներում և կարգով կատարել Կացարանում սպառված կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները, ինչպես նաև սոցիալական տան ընդհանուր օգտագործման տարածքների պահպանման և սպասարկման համար սահմանված պարտադիր վճարները, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

15) կատարել Կացարանի պահպանման համար անհրաժեշտ ծախսերը.

16) պահպանել մաքրություն Կացարանում և Սոցիալական տան ընդհանուր օգտագործման տարածքներում.

17) Կացարանը և հատկացված գույքն օգտագործել Պայմանագրին համապատասխան.

18) գիշերային ժամերին՝ ժամը 23:00-ից մինչև առավոտյան ժամը 7:00-ը Կացարանում և շենքի տարածքում պահպանել լռություն.

19) մինչ Պայմանագրի լուծումը և Կացարանի հետ հանձնումը՝ Կազմակերպությանը հանձնել կոմունալ վճարումները և Սոցիալական տան ընդհանուր տարածքների օգտագործման պարտադիր վճարները հավաստող փաստաթղթերը.

20) Պայմանագրի լուծմանը հաջորդող օրվանից դուրս գալ կացարանից.

21) Պայմանագրի լուծման դեպքում Կացարանը վերադարձնել Կազմակերպությանը՝ Պայմանագրի 1-ին կետում նշված վիճակում.

22) Կազմակերպության տնօրինությանը երկու օրվա ընթացքում հանձնել Կացարանի մուտքի դռան բանալիների մեկ օրինակը, որը ծրարավորվում, կապարակնքվում, ստորագրվում է Բնակչի կողմից և պահվում է չհրկիզվող պահարանում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11. Կացարանով ապահովման սոցիալական ծառայության դադարեցման և Պայմանագրի լուծման հիմքերն են՝

1) Պայմանագրով սահմանված ժամկետը լրանալը.

2) Բնակչի առցանց կամ առձեռն եղանակով հրաժարման դիմում ներկայացնելը.

3) միայնակ անձի կամ ընտանիքի բոլոր անդամների՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող կազմակերպություն ընդունվելը.

4) ընտանիքի անդամներից որևէ մեկի կողմից Կազմակերպությունում թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) կամ արգելված այլ նյութեր տարածելը կամ կազմակերպության տարածքում որևէ անձի առողջությանը կամ կյանքին իրական սպառնալիք ներկայացնելը կամ ծանր վնասելը.

5) ընթացիկ տարվա ընթացքում Կազմակերպության Կանոնները երկու անգամից ավելի խախտելը՝ Կանոններով նախատեսված դեպքերում.

6) բնակության իրավունքի ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում կացարանից 183 օրվանից ավել ժամկետով կացարանից բացակայելը.

7) բնակության համար նախատեսված բնակելի տարածություն սեփականության իրավունքով ձեռք բերելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

8) բնակության համար նախատեսված բնակելի տարածություն օգտագործման իրավունքով ձեռք բերելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

9) միայնակ անձի մահը կամ ընտանիքի բոլոր անդամների մահը.

10) Բնակչի սոցիալական միջամտության ծրագրով նախատեսված գործողությունը երկու անգամ անընդմեջ անհիմն չկատարելը՝ ըստ Կազմակերպության սոցիալական աշխատողի եզրակացության, կամ դեպքի վարման համաձայնագիրը կամ միջամտության ծրագիրը չստորագրելը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) Բնակչի կողմից որպես կացարանով ապահովման իրավունք ունեցող հաշվառվելու համար ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելը.

12) ՀՀ կառավարության որոշմամբ կամ համայնքի կողմից կամ մարմինների հետ համագործակցող կազմակերպության կողմից իրականացվող կացարանով ապահովման որևէ ծրագրի շահառու հանդիսանալը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

13) հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի դեպքում՝ երկու անգամ անընդմեջ համապատասխան մարմնից անձի (ընտանիքի) վերադարձն իր բնակության վայր նրանց կյանքին կամ առողջությանը սպառնալիք չներկայացնելու մասին տեղեկատվություն ստանալը.

14) Որոշման N 1 հավելվածի 6-7-րդ և 10-րդ կետերում նշված շահառուի դեպքում՝ վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն վեց ամիս ընտանիքի անապահովության միավորը 0.00 կամ ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից բարձր լինելը, իսկ Որոշման 3-րդ կետի 2-5-րդ ենթակետերում նշված շահառուի դեպքում՝ վերջին 12 ամսվա ընթացքում առնվազն վեց ամիս ընտանիքի անապահովության միավորը 0.00 կամ ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից բարձր լինելը.

15) Որոշման N 1 հավելվածի 9-րդ կետում նշված շահառուի դեպքում՝ ապաստարանների կամ աջակցության կենտրոնների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի N 171-Լ հրամանով սահմանված մշտադիտարկման արդյունքներով՝ կացարանի անհրաժեշտության բացակայության հանգամանքը.

16) մատչելի վարձավճարը երկու ամիս անընդմեջ չվճարելը:

4. ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Մատչելի վարձավճարի ամսական չափը հաշվարկվում է Կացարանի տարածքի և 1 քառ. մետրի համար հաշվարկվող գումարի արտադրյալի չափով (որին ավելացվում է եկամտային հարկի գումարը)՝ հետևյալ բանաձևով՝ V=A+B+C+D+E,

որտեղ V-ն Կացարանի 1 քառ. մետրի համար հաշվարկվող արժեքն է արտահայտված ՀՀ դրամով: Նշված բանաձևում՝

ա. A-ն անշարժ գույքի մաշվածության ծախսն է, որը հաշվարկվում է շենքի ծառայության տևողությունն ընդունելով 100 տարի հետևյալ բանաձևով՝

A= Q /100 (տարի)/12(ամիս),

որտեղ Q-ն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի N 31-Ն հրամանի հավելվածի մաս 1-ի 27-րդ ու 35-րդ կետերով սահմանված անշարժ գույքի 1 քառ. մետրի հիմնանորոգման համար նախատեսված երկու արժեքների հանրագումարն է,

բ. B-ն անշարժ գույքի մաշվածության սպասարկման ծախսն է, որը հաշվարկվում է A արժեքի 50 տոկոսի չափով,

գ. C-ն անշարժ գույքի մաշվածության վերականգնման կառավարման ծախսն է, որը հաշվարկվում է B արժեքի 10% չափով,

դ. D-ն անշարժ գույքի՝ հնարավոր ռիսկերից ապահովման (ջրի հոսք, հրդեհ և այլն) ծախսն է, որը հաշվարկվում է վերանորոգված շենքի վրա կատարված ամսական ծախսերի 20% չափով՝ 100 տարվա կտրվածքով հետևյալ բանաձևով.

D=A*20%

ե. E-ն անշարժ գույքի վարձավճարի չվճարման ռիսկի համար հաշվարկվող ծախսն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

E= (A+B+C+D)*10%:

13. Մատչելի վարձավճարի ամսական չափը չի կարող ավելի լինել, քան ամսական նվազագույն աշխատավարձը:

14. Պայմանագրի կնքման պահին ամսական վարձավճարի չափը կազմում է — ———— ՀՀ դրամ:

15. Պայմանագրի 12-րդ կետում նշված բանաձևի կամ բանաձևի հիմքում ընկած տվյալների փոփոխության դեպքում վարձավճարի ամսական չափը ենթակա է փոփոխման, որի մասին Կողմերը կնքում են լրացուցիչ համաձայնագիրը:

16. Վարձավճարը վճարվում է մինչև ընթացիկ ամսվա -ը ներառյալ՝ անկանխիկ եղանակով՝ առանձնացված հաշվառում վարելու նպատակով բացված ———————— հաշվեհամարին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

17. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրի պայմանների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար:

18. Բնակիչը կրում է իրեն հատկացված Կացարանի և գույքի կորստի կամ վնասման ռիսկը, եթե այն ոչնչացել կամ վնասվել է Պայմանագրին կամ Կացարանի (գույքի) նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով կամ այն այլ անձին հանձնելու արդյունքում:

19. Պայմանագրի հետ կապված, սակայն Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

22. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև ծանուցումները, տեղեկությունները, պահանջները և այլ հաղորդումները (այսուհետ՝ Ծանուցում) կատարվում են գրավոր՝ առձեռն, փոստային առաքմամբ կամ Կողմերի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով, եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով տվյալ հաղորդման համար այլ կարգ նախատեսված չէ:

23. Առձեռն հանձնված Ծանուցումը համարվում է ստացված այն ստացող Կողմին հանձնելու օրը, իսկ փոստային առաքմամբ ուղարկված Ծանուցումը՝ այն ստանալու օրը՝ համապատասխան փաստաթղթով հավաստված լինելու դեպքում:

24. Էլեկտրոնային փոստով ուղարկված Ծանուցումը համարվում է պատշաճ ուղարկված, եթե այն ուղարկվել է Կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, և ուղարկողը չի ստացել հաղորդագրությունը չառաքվելու վերաբերյալ ավտոմատ ծանուցում:

25. Կողմերից յուրաքանչյուրն իր հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի կամ Պայմանագրում նշված այլ կոնտակտային տվյալների փոփոխության մասին պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել մյուս Կողմին: Մինչև այդպիսի տեղեկացումը նախկինում տրամադրված տվյալներով կատարված Ծանուցումը համարվում է պատշաճ կատարված:

26. Եթե Բնակիչը հրաժարվում է առձեռն ստանալ Ծանուցումը կամ ստորագրությամբ հաստատել դրա ստացումը, այդ հանգամանքը կարող է արձանագրվել Կազմակերպության կազմված համապատասխան ակտով:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

27. Բնակչի մահվան դեպքում, Որոշմամբ սահմանված դեպքերում, Պայմանագրի Հավելված 1-ում նշված նրա ընտանիքի չափահաս անդամներից մեկի հետ կնքվում է նոր պայմանագիր, որի ժամկետի ավարտը պետք է համապատասխանի Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի հետ:

28. Բնակիչն իրավունք չունի Կացարանը կամ դրա մի մասը տրամադրել Պայմանագրի Հավելված 1-ում չնշված այլ անձի ինքնուրույն բնակության կամ օգտագործման՝ հատուցմամբ կամ անհատույց, այդ թվում՝ վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ:

29. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել՝ Որոշմամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներով:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

30. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և գործում է մինչև ---------- -ը, եթե առկա չէ ավելի վաղ լուծելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ հիմք:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

31. Պայմանագիրը կազմվել է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	**Բնակիչ**
ՀՎՀՀ՝ Գրանցման համարը՝ Գործունեության վայրը՝ Էլ. փոստ՝ Հեռ.՝ Տնօրեն՝ ----------	<u>Անուն,ազգանուն,հայրանուն</u> անձնագիր/նույնականացման քարտ՝ ---------, տրված՝ ----------. ում կողմից, ՀԾՀ --------- Կացարանի հասցե՝ ---------- Էլ. փոստ՝ Հեռ.՝ _____

Հավելված 1
20.. թվականի .....-ի .....-ի N ____ պայմանագրի

ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Հ/Հ	**Ընտանիքի անդամի անձնական տվյալները (անուն հայրանուն ազգանուն)**	**Անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան և համարը, ում կողմից է տրված, երբ)**	Հանրային ծառայությունների համարանիշ կամ չունենալու մասին տեղեկանքի համար	**Բնակչի հետ ազգակցական կապը**

1.				
2.				

Հավելված 2
20.. թվականի .....-ի .....-ի N ____ պայմանագրի

ԱԿՏ
ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ստորագրման օր, ամիս, տարեթիվ

«ՕԹԵՎԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս տնօրեն---անուն, ազգանուն և _____ անուն, հայրանուն, ազգանուն (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սերիա և համար, տրման ամսաթիվ, ում կողմից, ՀԾՀ, տրամադրված կացարանի հասցե, բնակարանի համար) (այսուհետ՝ Բնակիչ) կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Կազմակերպությունը սույն ակտի հիման վրա Բնակչին հանձնում է _____ հասցեի _____բնակարան՝_____ մ² նախագծային մակերեսով:

Աղյուսակ N1

Հ/Հ	Տարածքի անվանում	Մակերես	Քանակ	Նշումներ
1.				
2.				
3.				

Աղյուսակ N2

Կազմակերպություն սույն ակտի հիման վրա Բնակչին հանձնում է հետևյալ գույքը՝

NN Հ/Հ	Գույքի անվանում	Գույքի մակնիշ	Գույքային համար	Քանակ	Տեխնիկական բնութագիրը	Նշումներ

1.						
2.						

Գույքը հանձնեց՝

Կազմակերպության իրավասու անձ

(ստորագրությունը)

Գույքն ընդունեց՝

(ստորագրությունը)